ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4
«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09 հոկտեմբերի 2017թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Կարեյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Միքայելյան, Լ. Քամալյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ս.Մաթևոսյան, Լ.Շարաֆյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Տրդատյան

1. «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, մասնակիցներին ուղարկված ծանուցման, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 04.09.2017թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, որտեղ գրանցված են «ԳԱԿ-ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով ընթացակարգի բոլոր հնարավոր մասնակիցները, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2017 թվականի սեպտեմբերի 11-ին, Ժամը՝ 10:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/
«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ	X
«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ	X
«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ	

1.4 Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակիցների առաջարկած գները՝

Չափաբաժնի համարը	Գնման ապրանքի անվանումը	Չափի միավոր	Գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)			
			«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ	«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ	«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ	Նախահաշվային գին
1	Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայությունների	դրամ	9300000	6500000	9800000	9840000
2	Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայությունների	դրամ		14200000	20000000	20040000

«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի մասնակիցներից «ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ-ն իր գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ, «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը ներկայացրել է ԱԱՀ-ն ներառյալ, «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է բողոք և ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 03.10.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/36 որոշմամբ, որոշեց «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից 13.09.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնելով «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 1.5.1 կետով ընդունված՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, ուստի ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայության կարիքների համար 2017թ. ընթացքում անհրաժեշտ **«Գործարքների իրականացման և պատվերով ծրագրային ապահովման մշակման ծառայությունների»** ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված **«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6»** ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում **հանձնաժողովը որոշեց՝**

1. **«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով** գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 1.5.1, 1.5.3 և 1.5.4 կետերը համարել անվավեր:
2. **«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6»** ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:
3. Հանձնաժողովը որոշեց հրապարակել բացման նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:
4. Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պատավորությունների վերաբերյալ:
5. **«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-17/6»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Վ.Կարեյան

Քարտուղար՝ ---------- Ա.Տրդատյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Ա. Միքայելյան

2. ---------- Լ. Քամալյան

Բացող անդամներ՝

1. ---------- Ս. Մաթևոսյան

2. ---------- Լ. Շարաֆյան